

# ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱԽԱՐ

Ն. ՀԱԼԱՅԵՆՍԻ

## ՆՉԱՆՆԵՒՈՐ ՎԱՆՔԵՐ

### Կ Ե Չ Ա Ռ Ի Ս \*)

Ս. Յարութիւն եկեղեցին, որ կանգնած է երեք եկեղեցիներից դէպի արեւմուտք, գերեզմանատան մէջ, բաղկացած է մի տաճարից և մի գաւթից: Երկուսն էլ շինուած են սև տաշած քարից:

Եկեղեցու երկարութիւնն է 7 մետր, լայնութիւնը 4,60 մետր և բարձրութիւնը մօտ 15 մետր:

Եկեղեցին ներքուստ միանգամայն նման է ս. Նշան եկեղեցուն: Սա ևս անսխիւն է, այստեղ ևս չորս որմնասիւնների վրայ բոլորում են պայտած և կամարներ՝ կրելով գմբէթը: Որմաններ բոլորովին չունի, միայն արեւմտեան կողմում, որմնասիւնների և հարաւային պատի միջև բոլորում են կամարներ՝ խորաններ յիշեցնող խորշեր գոյացնելով: Կողակը բոլորած և, կամարակապ և ունի մի երկար ու նեղ պատուհան:

Եկեղեցին արտաքուստ շատ պարզ է. կիսաբոլոր գեղեցիկ կարնէզներ եզրափակում են եռանկիւնի ձևով վերջացած պատերը, պարփակելով իւրաքանչիւր կողմում մի փոքրիկ, նեղ և երկար, կամարակապ պատուհան:

Գմբէթը զլանած և, բաւական բարձր, ունի երկու նեղ և երկար պատուհան և պսակուած է կոնած և կաթուղիկէով:

Եկեղեցին ունի միայն մի դուռն, եզրափակուած երկական կիսաբոլոր և մի քառանկիւնի որմնասիւներով, որոնց վրայ բոլորում են պայտած, համակենտրոն երեք կամարներ:

Այս դռան առջև բացւում է գաւթիթը, որ սակաշէն է, և արեւմտեան կողմը մի սիւնով և երկու որմնասիւնով երկու կամա-

\*) Տես «Ազգագրական Հանդէս» XXII գիրք.

բակապ բացուածք ունի: Սիւնը կլոր է, միակտուր քարից, իսկ որմնասիւները երեքական բոլորակաձև կիսասիւններ են, միակտուր քարից, գեղեցիկ խոյակով:

Գաւթի հարաւային և հիւսիսային կողմերում կան մի մի փոքրիկ պատուհան՝ շղթայաձև օրնամենտներով շրջապատուած: Գաւթի երկարութիւնն է 4 մետր, լայնութիւնը 4,25 մետր և բարձրութիւնը 4 մետր:

Եկեղեցու շուրջը եղել են բաւականաչափ գերեզմաններ, սակայն այժմ բոլոր տապանաքարերը տարուած են և նոյն իսկ եկեղեցու բակը յատկացրուած է շինութիւններ շինելու:

Ս. Գրիկորի եկեղեցու հարաւային կողմում 3½ մետր երկարութեան, 2½ մետր լայնութեան և մօտ 4 մետր բարձրութեան կայ մի քանդուած մատուռ, որի բոլորաձև սեղանն է միայն կանգուն: Միանգամայն սրան նման և միաչափ մատուռ էլ 4 մետր հեռու է շինուած, որ նոյնպէս կիսաւեր է: Այս երկու մատուռները միացած են մի պատով, արևելեան կողմից, որի մէջ 1 մետր բարձրութեան վրայ կանգնած են չորս գեղեցիկ խաչքար, 1,70 մետր բարձրութեան: Սրանցից երկու միջինը կարմիր քարից են, իւրաքանչիւրը մի մետր լայնութեան, շատ գեղեցիկ կերտուած, միայն ստորին մասում եղած տապանագիրը դիտմամբ եղծած է:

Այս երկու խաչքարի երկու կողմերին էլ մի մի սև խաչքար կայ, աշակողմեանի վրայ ոչ մի տառ չկայ և ոչ էլ եղծուածի հետքեր, իսկ ձախակողմեանի գլխին դրուած է մի ուրիշ, կարմիր խաչքար, որի վրայ անմշակ ձևով գրուած է. ԱՅ ՈՂՈՐԴԻ ՄԱՐԳԱՐԻ ԵՒ ԻՐ ԺՆՈՂԱՅՆ: Պարզ երևում է, որ այս խաչքարը յետոյ է դրուած, մանաւանդ որ միւս խաչքարերից մի քիչ բարձր է և իւր տակի խաչքարից 5 սանտիմետր լայն:

Այս խաչքարերի առջև, բայց փոքր ինչ հեռու, ընկած կիսաբոլոր, կամարակալ և 2 մետր բարձրութեան կողմնակալ քարերը ցոյց են տալիս՝ որ այս ևս մի ծածկուած մատուռ է եղել:

Ոչ այս խաչքարի առջև, և ոչ էլ խորանների մէջ չեն նկատուում տապանաքարեր:

### Արժանատիքներ

Ս. Գրիգոր եկեղեցու հարաւային դռան վերև:

ՆՁԲ Թ. Հա(յոց) (=933) Ի Թագաւորութեան Գագկայ և Ի հայրապետութեան Տն. Մարգարի եւ Գրիգոր Մագիստրոս

որդի Հասանա շինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխաւսութն  
և իմ պատրոնին և իմ որդեացն. որք ընթեռնոյք զիս  
յաղաւթս յիշեցէք ի Քս աղաչեմ:

Նոյն եկեղեցու հարաւային և մասամբ արեւելեան պատերի  
վրայ.

Ի հինգհարիւրերորդի ամի թուականութեանս թոր-  
դոմեան ի թագաւորութեան սբ և ինքնակալ թագաւորին  
Կոստանդեա Մանուսիսին բերաւ

ոսկի\*) մատանիս, զոր հզարին եւ առաքինոյն քար  
եպաշտին Գրիգորո Մազիստոսին Կիտաւնտին և Դուկին  
Վասպուրականի և Տարաւնո Արշակունոյն և Հայկազնոյն,  
մեծաւ աշխատութբ

ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղեց

ցիքս իւր. և ոչ այլ ինչ հայցէ բայց միայն աղաւթս  
առնել սբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեայ, ընդ  
նմին և ծռային Քի Գրիգորոյ և որդոց իւ

րոց. եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս

Կեչառուաց. ուր Մազիստոսն կենդանի է՝ ամենայն  
չարաթ աւր զժամն Հասանա արասցեն անխափան և յետ  
եկիցն Մազիստոսին արասցեն անխափան: Արդ որ ոք

այսմ վճոյ հաստատնոյ խափանել ջանայ թե

յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանեաց կամ ի քահա-  
նայից, այնպիսին Յ և ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի և  
բաժինն ընդ Յուդայի եղիցի և ընդ տիրասպան քահ

անայիցն: Եւ այս զիր մեր է Յովանիսի շնորհմն  
Աստուծոյ Բջ

Նո իսկոպոսիս և սբ և մեծի հաւրս Բարսղիսէ. թե  
ոք այս գրոյս խափանել ջանա. այնպիսին նզովս չարա-  
չարս ընկալցի ի Սբ Լուսաւորչէն Գրիգորոյ և յ

ամենայն սրբոց եւ ի մէնջ. նատարիչք զրոյս աւրհ-  
նեալ եղիցի (ն)...

Նոյն եկեղեցու հիւսիսային պատի վրայ.

Ն... Թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տն

\*) Ընդգծումները արեւելեան պատի վրայ են.

Գրիգորիսի և ի թագաւորութեանն Վրաց Դէորդէ և մերո իշխան

« Հայր Պետրոս և եղբայր իմ Տր Յուսէփ և Սարգիս կրանաւոր և միաբան ուխտս հաստատեցաք Տր Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի ի տարին

զ Քրիստոս ի տաւնի առաքելոյն Դաւթի, Պետրոսի, Յոհաննու ամէն եկեղեցիքս. Ե թէ ոք խափանէ Յ ԺԸ իցն նզովեալ եղիցի:

Այս արձանագրութեան ներքեւ.

Ես Սիմէոն քահանա զնեցի յեկեղեցիս որ առնէն ինձ ի տարին Բ. աւր ժամ. որ խափանէ դատի յ Այ.

... աչ աւուր և միաբան եղբարքս վերստին

նորոգեցաք զեկեղեցիս և

սահմանեցաք զ տաւնին սրբո

խաչին որ ամենայն եկեղեցիքս ժամ

Գիշուկին առնեն միջնորդութբ Ամի իր բուբային:

Ս. Գրիգոր եկեղեցու հարաւային պատի վրայ, արեւի ժամացոյցի մօտ:

Ի ՈկԲ (=1213) թու. Կամաւն Այ ես Վաչէ որդի Սարգսի որդո Վաչուտի և ամուսին իմ

Մամախաթուն և որդիք իմ Քուրդս և Վաչուտ միաբանեցաք ի սր ուխտս Կեչառուս

եւ տուաք ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ՝ այգի

սպասք եկեղեցո. եւ Տր Գրիգորիս եւ Գրիգոր վարդապետս. զ Մառգարդարն

պատարազն ինձ Վաչէի և զՂազարոյն Մամախաթունին և զՆոր կիրակէ

ն Քրդին ամէն եկեղեցիքս. եւ ով առաջնորդ լինի զսէրն առնէ Նոր կիրակէին

անխափան:

Ս. Գրիգորի հարաւային պատին.

Թուխ մերոյ ՉԻԱ. (=1272) Կամաւն Այ ես Վիրապշ

ահ միաբանեցայ սրբոյ Նշանիս յառաջն

որդութե Տն Աթանասի, եւ տվի իմ հալ

ալ արգեանց իմոց. եւ ետուն ինձ

Դ աւր ժամ ի տաւնի Ատոմեանց.

Կատարիչք աւրհին ի Քէ:

Գաւթի արեմտեան դռն վերև.

Կամաւն Այ ես Քուրդս որդի Կախայբերին մտաւ ածի  
սէրն Այ

եւ եկի սր ուխտս ի Կեչառուս եւ կրամաւորեցայ ի  
դրան սր Լուսաւ

որչիս եւ անուանեցայ Յոհաննէս, և արարի պահա-  
րան սր Յոհանի

անիս, որք ընթեռնոյք յիշեցէք յաղաւթս...

Նոյն դռն կամարի շուրջը և նրա միջև.

Աւգնութեամբն Այ մեք Մարասայի եպս  
կոստոսերս Տր Սարգիս եւ Տր Վրթանէս միաբանեցաք  
Կեչառուսայ

Սր Լուսաւորչիս և տվ

աք ի մեր հալալ արգեաց Մ

դահեկան յառաջնորդութե:

Վ.դ. Վդերս և միաբանքս ընկալաք. ձ ջաղա-

ցն անցուցաք. ձ ժամատուն. սահմանեցաք

ամէն ամի Զ աւր պատարագ ի տաւնի Ռեստա-  
կիսի եւ

Վթի (Վրթանիսի). Գսզզ (?) Վթ (?) որ խափանէ  
նոցա մեղացն պարտ

ական է. Կատարիչքն աւրհին յ Այ:

Գաւթի ներքին կամարի վրայ.

Աւգնութեամբն ամենասուրբ Երրորդութեան... (ես)  
Հասան որդի Վախթանգայ որդւոյ մեծին Հասանայ տէր  
Քոյախան բերդոյ Քաչենոյ և ամուսին իմ Մամբան դուս-  
տրը Բաղաց թագաւորին, միաբանեցաք մեծ և հռչակաւոր  
սր ուխտիս Կեչառուաց եւ... յաւերման Նետողաց բազում  
զանձիւք... նորոգեցաք... Թվին ՈՂԷ. յառաջնորդութեան  
Մխիթար վրդ. Գէ. վարդապետերս և այլ միաբանքս ըն-

կալան եւ սահմանեցին մեզ Բ. աւր պատարագ ամէն  
եկեղեցիքս. զաւագ. Զատիկն ինձ և Գշաբթ աւրն Մա-  
մաքանայ. Կատարիչք գրոյս աւրհնին յ Այ. իսկ որ խա-  
փանէ ի մեղաց մեր կամ յաւտարաց կամ յիշխանաց և  
յառաջնորդաց՝ մեր մեղացս պարտական է եւ ՅԺԸ հայրա-  
պետացն նզոված է. Կատարիչքն աւրհ:

Կաթողիկէ եկեղեցու հիւսիսային դրան վերև.

Ես Վասակ որդի Սաղբակա շինեցի զ սբ Կաթողիկէս  
յաւզնութիւնս...

Եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն Իւանէ Ա-  
թաբակի և արեան

հարագատի

իւրոյ Շահանշահի

եւ Աւագին եւ իւր մաւրն

պատրոն Սուրբին և իմ եղբայրացն եւ որդեացն յարև  
շատութիւն, ինձ եւ ամուսնոյ իմո

Մամային մեղաց թողութիւն: Որք

երկրպագէք յիշեսլիք ի Քս աղաչեմ.

Գրիս ընծայ Ա լաւ շինակ (ան) Ա

տուն ի նորաշէնքն երես եւ Ա ի Կարենիան:

Ս. Նշան եկեղեցու հիւսիսային պատի վրայ.

Ի ՈՄԳ. (=1204) Կամաւ բարերարին Այ ես Վարդ  
ըմբել որ նորոգեցի ի յԵրևան զ Մեղիտոնոյ էգոյն Հա-  
րեքն եւ ետու ի սբ Գրիգորոս. սպասաւորք սորա աւանդե-  
ցին տարին Բ Ժամ. Որ խափանէ իմ մեղացս տէր է ա-  
ռաջի Այ. ամէն:

Ս. Նշան եկեղեցու դրան վերև.

Յիշիսլիք յաղաւթս զաստուածասէր Պարոն զՎաչէ  
որ նորոգեաց վերստին զեկեղեցիս. Թիւն ՈՀԲ էր. (=1223)

Նոյն եկեղեցու հիւսիսային պատի վրայ.

Կամաւն Այ ես Պատրոն Վարդ Երևանոյ ետու զիմ  
հայրենի ագիւն որ Զմշկա կոչի ի հայր. Պետրոս, և արարի

ինձ որդի, եւ ես հայր Պետրոս ետու ի սուրբ Լուսաւորչէս, որ առնեն ի տարին Ը ժամ. Դ. Վարդին, Դ. Անիարին. Որ հակառ կայ կամ այգոյն կամ ժամին ՅԺԸ իցն և յայս սրբոցս նզովեալ եղիցի:

Ս. Նշան եկեղեցու արեւմտեան պատի վրայ.

Կամաւն Այ ես Մխիթարիչ որդի Գ

րիգորի ետու զիմ Ախրին այգին յերանլի սբ ուխտս կեչառ

ուս. հրամանաւ Տն Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետացն:

եւ յառաջնորդութի Համազասպա գրեցաւ ժամ

ն. ինձ Մխիթարչիս, Գ. Տիկնաց Տիկնակեղորին մաւրն, Դ. Գրիգորոյ Մամկաւ Հաստատէ զիրս կամաւն Այ. Ով խափանէ՝ մեր մեղացատէր առաջի Քի:

Ս. Յարութիւն եկեղեցու արեւմտեան դրան վերև.

Թիւ Ոկթ (=1120) Շինեցաւ Սբ Յարութիւնս առ ի յիշատակ համաւրէն ննջեցելոց ի Քս, եւ ծնողաց իւրոց Հաստանայ և Բուզուքանայ եւ զաւակաց... Արձանս աւրհնութեան սիրոյն որ առ Ած և առ սրս նորա ամէն:

Տապանադրն

Ս. Գրիգոր եկեղեցու արևելեան կողմում մի բարձր պատուանդանի վրայ բարձրանում է մի գեղեցիկ խաչքար՝ (տես նկարը) որի վրայ կայ հետեւեալ տապանագիրը. —

Ա. երես. —

Զվեցիկ վարդպետ յաղաւթս յիշեսլիք ի Քս աղաչեմք:

Բ. երեսում.

Յիշեսլիք յաղաւթս զ ծառայն Այ զ վեցիկ քարագործ, որ շինեաց զնոր եկեղեցիս եւ ի կատարման սորին փոխեցաւ առ Քս կիսաւէր ամաց: Ես Յովհաննէս եւ եղբարքս իմ հարազատս սորին որ կանգնեցաք զսբ Նշանս ի վերայ հանգստարանիս սորին ի բարեխաւսութիւն ինձ և իմ զաւակացն եւ ամ հաւատացելոց եւ յիշողացն զսա:

Վեցիկ վարդապետի դամբարանի մօտի խաչքարի վրայ.

ԹՎ. ՉԱ. (=1252) Զս Ած ողորմեա Յաղազարա ի  
գալըստեն քում:

Ս. Գրիգոր եկեղեցու արևելահիւսիսային կողմում կանգ-  
նած խաչքարի յետևում.

Ես Յո... կանգնեցի զխաչս ի բարեխաւսութի Աբ-  
րահամա Յովասափին, ինձ եւ ծնողաց իմոց ի թողութե  
մեղաց յիշողք յիշեալ եղիցիք ի Քս. ԹՎ. Չ. (=1251)

Այս է հանգիստ շնորհաց Աբրեհամ քահանայի, որ  
կիսամեայ փոխեցաւ ԹՎ. ՉԻԲ. (=1253)

Այս է հանգիստ Վասակայ որդոյ առն Խաչենեցւոյ  
յիշեալիք աղաչեմք:

Այս է հանգիստ Էլբէքին, որդոյ Արտաւազայ յիշեա-  
լիք յաղաւթս աղաչեմք.


Ս. Գրիգոր եկեղեցու առջև եղած մի տապանաքարի վրայ.  
Այսմ տապանակիս հանգչի Սարգիս, որ կիսամեայ  
վախճանեցաւ ի ձեռս ալլազգի արեամբ...

## Մ Ա Ք Ր Ա Վ Ա Ն Ք

Գտնուում է համանուն գիւղում, (62°23'57"—40°31'35"), Դա-  
րաշիչակ ամարանոցից դէպի արևելահարաւ, հազիւ 4 կիլոմետր  
հեռու: Կառքի մի հասարակ ճանապարհ միացնում է այս գիւղը  
Դարաշիչակի հետ, որ ամարային ամիսներում փոստային հաղոր-  
դակցութիւն ունի Երևան և Նոր-Բայազէտ քաղաքների հետ:

Պատմական տեսութիւն.—Այս վանքի մասին պատմական  
հիշ մի տեղեկութիւն յայտնի չէ: Մի աւանդութիւն ասում է, թէ  
մի շահ կամեցել է քանդել այս եկեղեցին և նրա քարերով կա-  
մուրջ կառուցանել Հրազդանի վրայ, սակայն վանքի զօրութիւնից  
կատաղել է, այս պատճառով էլ այս տեղը կոչուել է Շահ-դու-  
տուրան (շահի կատաղած տեղ), որ յետոյ պարսիկները փոխել  
են էշէկ ղուրդուրանի (իշի կատաղած տեղ):

Վանքի նկարագիրը.—Եկեղեցին տեղաւորուած է գիւղի մէջ,  
ձորակի լանջին: Շինուած է սև, սրբատաշ քարից: Վանքը բաղ-  
կացած է մի եկեղեցուց, մի դաւթից և մի փոքրիկ մատուռից:



Դարաչիչակ. Վեցիկ վարդապետի դամբարանը  
*Daratchitchag. Perre tombale.*



Դարաշիշակ. խաչքար.  
*Daratchitchag. Pierre tombale.*



Դարաշիշակ. խաչքար.  
*Daratchitchag. Pierre tombale.*



Դարաշիլակ. Կեչառիսի ս. Յարութիւն. գաւիթը.  
*Daratchitchag. Sourp Arouthun. nortex.*



Դարաշիջակ. Կեչառիսի ս. Յարութիւն. հիւսիս-արեւմուտքից  
*Daratchitchag. Sourp Arouthun. du N. O.*



Մախրաթ

Եկեղեցին անսխիւն է, վեց որմնասիւների վրայ բոլորում են պայտած կամարներ, որոնցից չորսի վրայ բարձրանում է կաթուղիկէն: Որմնասիւններն երեքական կիսաբոլոր և նոյնչափ քառանկիւնի կիսասիւններից են բաղկացած, կլոր և քառանկիւնի խոյակով զարդարուած:

Եկեղեցու արեւելեան կողմը կայ մի բոլորածև, կամարակապ և թաղակապ կողակ, կողքերին մի մի երկյարկանի աւանդատուն: Սեղանի ճակատը զարդարուած է մանր, կարմիր քարերով կերտուած խաչերով: Երկու սանդուխտ բարձրանում են սեղանի կողքերից:

Արևմտեան կողմում, նախնական աւանդատների փոխարէն խորշեր են բացւում որմնասիւնների միջև:

Արտաքուստ՝ արեւելեան պատը ունի երկու ներսանկուած, ճաճանչներով պսակուած: Պատի մէջ տեղում բացւում է մի նեղ և երկար պատուհան, որի շուրջը բոլորում է մի շրջանակ, անցնելով ներսանկուածների և երկրորդ յարկի աւանդատների փոքրիկ պատուհանների վրայով: Ներքին յարկի աւանդատների պատուհաններն էլ զարդարուած են մի մի կամարով:

Հարաւային և հիւսիսային պատերը միմեանց նման են, պարզ և շրջանակով պատած մի մի պատուհանով:

Արևմտեան պատի մէջ բացւում է միակ դուռը, շրջանակով պատած: Սրանից բարձր կայ մի պատուհան, պարզ շրջանակով և նրանից վերև մի գեղեցիկ խաչ:

Գմբէթը գլանաձև է, հմքում երկու կիսաբոլոր շրջանակներով պատած: Գմբէթի կաթուղիկէն այժմ քանդուած է և տախտակով ծածկուած:

Գաւիթը, որ շինուած է եղել եկեղեցու արևմտեան կողմը՝ այժմ բոլորովին քանդուած է:

Փոքրիկ մատուռը բարձրանում է եկեղեցու հարաւային կողմում, պատին կից, սաղաչէն է և անսխիւն: Միակ, արևմտեան դռան երկու կողքին կանգնած են մի մի գեղեցիկ խաչքար:

## ԱՐՏԱՒԱԶԴԱՅ ՎԱՆՔ.

Թաքալու կամ Մուլա Ալի քենտ (61° 12' 11" — 40° 37' 49") գիւղից մօտ մի կիլոմետր դէպի արևմուտք, Միսխանա գետի ափին բարձրանում է այժմ աւեր Արտաւազդայ վանքը, որ սրբատաշ քարից է շինուած եղել, և որի միայն կիսաւեր պատերն են մնացել:

Այս վանքի մասին պատմական տեղեկութիւններ պակասում են, յայտնի է միայն, որ Մաշթոցը Մաքենոցաց վանքում հոգևոր

կոչում ստանալուց յետ եկել է այս վանքը և ապա այստեղից անցել Սեան կղզին, ուր և շինել է Սեանայ վանքը, <sup>1)</sup> ուրեմն այս վանքը գոյութիւն է ունեցել Թ դարում, Պատերի վրայ դեռ ևս մնում են մի քանի արձանագրութիւններ ԺԳ. դարից. սրանք են.

Եկեղեցու դրան կամարակալ քարի վրայ.

Կամաւն Աստուծոյ մեք ծառայք Աստուծոյ Թամամս և Պանտունտս եկաք ի վանքս Արտավազա և զմեր հայրենի այգին որ ի յԱւան է, տուաք ի սուրբ Աստուածածինս վասն փրկութեան հոգոյ մերոյ. հայր Սարգիս և այլ միաբանք ետուն մեզ ն. պատարագ ի տաւնի սուրբ Առաքելոցն Յովհաննու և Յակոբա...

Արեւելեան պատի վրայ.

Ի ՈՄ Թ. (=1201) Կամաւ Ամենակալին Աստուծոյ ևս Մխիթարս տվի զիմ հալալ արդիւնս ի սուրբ Աստուածածինս. միաբանքս ետուն զՋրաւհնեայք աւուրն պատարագել զամէն եկեղեցիքս կէս ինձ և կէս ամուսին իմոյ Անայալին: Որ խափանէ ՅԺԸ հայրապետացն նզովս առցէ...

Նւ զիս զմեղապարտ զրիչս զՍարգիս յաղաւթս յիշեցէք:

Հարաւային պատի վրայ.

Ի Թ. ՈՄ (=1201) Ես Վահրամ միաբանեցայ սուրբ ուխտիս և զիմ հոգս արդիւնս ի սուրբ Աստուածածինս տվի. եղբարքս տվին և առաջնորդք սուրբ ուխտիս տարին Ա. պատարագ ի Համբարձման: Ով խափանէ իմ մեղացս տէր է:

Հիւսիսային դրան կամարակալ քարի վրայ.

Ի հրամանէ հզաւրին Աստուծոյ ևս Զնդանշահ և ամուսին իմ Մարթա եկաք ի վանքս ի յԱրտավազա և եղաք զմեր հոգոյ արդիւնս առատս սուրբ Աստուածածինս յաջորդութեան հաւր Սարգսի քեռո իմո և սպասաւորք սորա ետուն ի տարին Բ. աւր ժամ, ի տաւնի սուրբ Աստուածածնին, մին ինձ և մին ամուսնո իմո. որ խափանէ բարձցէ առաջի Աստուծոյ զմեղս մեր. ի Թ. ՈՂԳ (=1224):

1) Ստեփան Օրբելեան զլ. Աճ.



Յովհաննուսական կամ Այրի-վան

## Կ Ե Ր Ե Ն Ը Վ Ը Ն Ք.

Գրւումը, հնումը Կարենիս գիւղի ձորակի մէջ բարձրանում է Կարենավանքը, որ այժմ բոլորովին անխնամ է թողնուած։ Վանքի տաճարը շինուած է սրբատաշ, իսկ գաւիթը՝ հասարակ քարից։ Գաւթի պատի վրայ կայ միայն հետեւեալ արձանագրութիւնը.

Սուրբ Նշանս տէրունական, Տէր եպիսկոպոսին մեղացն քաւիչ։ ԹՎ. ՌԺԶ (=1567)։

Այստեղ եղել է նաև մի ուրիշ խաչքար հետեւեալ արձանագրութեամբ, որ Սմբատեան եպիսկոպոսի ասելով <sup>1)</sup> տարուել է Ալափարս գիւղը և հին մատուռի մէջ յարմարացրուել։—

Կամաւն Աստուծոյ մեք Աւաքս, Յովհաննէս և Շահերս շինեցաք զնալ ջրիս և կանգնեցաք զխաչս բարեխաւսութեան հոգոց մերոց։

Տաճարի մէջ կայ մի գերեզմանաքար, որի վրայ նկարուած է մի մերկ մարդ, երեկ ճգնաւոր, շուրջը գրուած.

Այս է տապան Մեղրոնին թվին ՌՃԻԶ (1677)։

Առաքել Դաւրիթեցու ասելով Շահաբաս Մեծի արշաւանքներից և աւերածութիւններից յետոյ Ֆրանկ մի քանի պատրիկներ եկել են այս վանքը, ուր աւանդութեան ասելով պիտի գրտնուէին Մատթէոս աւետարանչի և Անդրէ առաքեալի գերեզմանները և պեղելով սեղանի տակ՝ գտել են Անդրէ առաքեալի գլուխը և կամեցել են իրենց հետ տանել, սակայն տեղոյն եպիսկոպոսը թոյլ չէ տուել <sup>2)</sup>։

Այժմ ս. Անդրէ առաքեալի գլուխը և Մատթէոս աւետարանչի աջը մի արծաթապատ պահարանի մէջ ամփոփուած գտնուում է ս. Էջմիածնի Մասանց թանգարանում։

## ՆԵՂՈՒՑԻ ՍՈՒՐԻ ԸՍՏՈՒՆԸՍԺԻՆ.

Արդաքենտ, հնումը Արտազական, գիւղից 1<sup>1</sup>/<sub>2</sub> կիլոմետր հեռու, արևմտեան կողմը, երկու ձորակներով մեկուսացած, անտառապատ բլրի վրայ գտնուում է Նեղուցի ս. Աստուածածին վանքը չրջապատուած տների հիմնապատերով ու խաչքարերով։ Վանքը բաղկացած է մի անսիւն, գմբեթազարդ տաճարից և մի սիւնազարդ գաւթից. այժմ կիսաւեր է և անխնամ թողնուած։ Բաղմա-

1) Սմբատեան. Գեղարքունիք եր. 307.

2) Առաքել Դաւրիթեցի թձ.

թիւ արձանագրութիւններից ընթեռնելի են հետեւաւորը.  
Տաճարի դռան վերայ.

Յուսոյն Աստուծոյ եւ Հայրապետ միաբանեցայ սուրբ  
ուխտիս և ետու ճ. կարմիր... գինն, սոքա շնոր-  
հեցին Ի. աւր ժամ, Ա. ինձ... թվ. ԶԻ=(1271).

Տաճարի պատի վրայ, ներքուստ.

Կամաւն անմահին Աստուծոյ եւ Յոհնիկ որդի Մե-  
թորին և ամուսին իմ Նուրսաթ. և որդիք իմ Միր և  
Հնդու, միաբանեցաք սուրբ Աստուածածնիս, և տուաք  
ձի. դեկան սուրբ ուխտիս, և սպասաւորք խոստացան ի  
տարին Դ. պատարագ Յոհնանն:

Գաւթի պատի վրայ, արտաքուստ.

Յուսոյն Աստուծոյ եւ Տիրատուրս, Գրիգորս և Աս-  
տուածատուրս միաբանեցաք սուրբ Աստուածածնիս. և  
սպասաւորքն շնորհեցին մեզ Զ. աւր պատարագ. Բ. Տի-  
րատրոյ, Բ. Աստուածատրոյ, և Բ. Գրիգորոյ:

Միքէի հետու, դռան աջակողմեան քարի վրայ. թվ. ԹՃ(=1451).

Վանքի արևմտեան կողմը կայ մի կիսաւեր մատուռ, որի  
շուրջը գտնուող խաչքարերից մինի վրայ կարդացուած է.

Կամակեցութեամբ սուրբ և արժանաւոր վարդապետին  
Մարգարէի կանգնեցի զխաչս...

### ՂԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԻ ՎԱՄ ԱՅՐԻ ՎԱՆԻ.

Այրի-վանք գիւղի (62°45'55"—40°26'20") հարաւային կող-  
մում ձգուող մի փոքրիկ հրուանդանի վրայ կիսաւեր գրութեամբ  
բարձրանում է Հայր Յովնաննու վանքը կամ Հայրաւանքը կամ  
Այրի վանքը:

Վանքի հիմնարկութեան մասին պատմական տեղեկութիւններ  
պակասում են, միայն տաճարի վրայի արձանագրութիւնը ցոյց է  
տալիս, որ վերանորոգուած է 1211 թուին Յովասափի առաջնոր-  
դութեան ժամանակ: Ղազար Ջահեցին էլ պատմում է թէ 1381  
թուին Լանկթամուրի արշաւանքի ժամանակ այս վանքի վանա-  
հայր Տէր Յովնանը կապում է իւր մէջքին այս վանքում պա-  
հուող խաչը, այն, որ Կոթայ և կամ Սեւանայ ս. Նշան է կոչուում  
և այժմ գտնուում է Սեւանի վանքում, և ոտքով վազում Սեւանայ

ծովի երեսով: Լանկթամուրը զարմանալով այս հրաշքի վրայ՝ խնդրում է վանահօրը յետ դառնալ՝ խոստանալով կատարել նրա ամեն մի խնդիր և երբէք չֆութսել նրան ու նրա վանքին: Հայր Յովհաննը ևս է դառնում և ցոյց տալով իւր մէջքին կապած խաչը՝ խնդրում է ազատել քրիստոնեայ գերիններից այնքան, որքան կը տեղաւորուին իւր փոքրիկ վանքում: Լանկթամուրը համաձայնում է, սակայն նրա զարմանքը աւելի ևս սաստկանում է, երբ նկատում է, որ բիւրաւոր գերիներ կարողանում են տեղաւորուել այս վանքում: Կամենալով բացատրել այս հրաշքի պատճառը՝ ինքը մտնում է եկեղեցին, և տեսնում, որ ներս մտած գերիներն աղանիկ են դառնում և թռչում դէպի Սևան:

Այս աւանդութիւնը հիմայ էլ պատմւում է տեղական հայ ժողովրդի մէջ և վանքն էլ այս հրաշքի պատճառով Մարգարաւնայ կոչւում:

Մինչև ժ.Ղ. դարի կէսը այս վանքը շէն է եղել, ինչպէս երևում է Սևանայ վանքում պահուող կոնդակներից. սրանց մէջ ասուած է՝ որ Արարհամ Գ. կաթողիկոսը 1834 թուին և Մինաս կաթողիկոսը 1752 թուին Յովհաննու վանքի առաջնորդ են կարգել Յովհաննէս և Աբրահամ վարդապետներին \*):

Վանքը բաղկացած է մի տաճարից և մի դաւթից, երկուսն էլ շինուած տաշած քարից: Տաճարը խաչաձև է, անսիւն և պսակւած կաթուղիկէով: Ունի երկու դուռն, մինը հարաւային կողմը, իսկ միւսը՝ արևմտեան:

Գաւիթը կառուցուած է երկու ամբողջական և վեց կիսասիւնների վրայ, ըստ երևոյթին գաւիթը տաճարի հետ միաժամանակ չէ շինուած: Գաւթի ձեղունը թափուած է և քարակոյտերի մէջ նկատելի են տապանաքարեր, որոնցից մինի վրայ կարդացւում է.

ԹՎ. ԶԳ. (=1254). Աստուած ողորմեա Աւագին.

Գաւթի միջից մի ստորերկրեայ անցք իջնում է մինչև լիճը: Հաւանական է, որ այս անցքը շինուած լինի այն նպատակով, որ յարձակումների ժամանակ, երբ ժողովուրդը կապաստանէր եկեղեցում, կարելի լինէր այդ անցքով իջնել և ջուր վերցնել:

Տաճարի և գաւթի վրայ կան բազմաթիւ արձանագրութիւններ, սակայն մեծ մասը եղծուած է, կարդացւում են միայն հետեւեալները.

Տաճարի հարաւային պատի վրայ.

ԹՎԻՆ ՈՆ (=1211), Նորոգեցաւ եկեղեցիս յառաջ-

\*) Սմբատեան. Գեղարքունիք. եր. 439.

նորդութեան Յովասափին և մեծ սպարապետ Բուբայն տէր երկրիս ետ յԱռ ինչք զայգին Ոսկերակա եւ Քանաքեռու Բ. ակն ջրաղացին. Տէր Վանական ետ զխաժլի ձագն բերդաժողովուրդն վանիցս կարգեցաք զյայտնութեան ճրագալոյցն տարի Խ. աւր ժամ: Զատկի ժամին կամ տաւնին տան. ով խափանէ կամ յեկեղեցոյս հանէ դատի ի Տեառնէ և մասնակից Յուդայի և սատանայի լիցի. ամէն:

Տաճարի հիւսիսային պատի վրայ.

Ես Աջահարս եւ Մուժկանց Գրիգորս, Աբէլս եւ Առաքելս միարանեցաք եւ տվաք զՄապուանց այգին Երեւան մօտ ի Պապան, եկեղեցւոյս, Հայր Ոհան, եւ առաջնորդք սորա արասցեն ժ. ժամ, ով խափանէ դատի ի Տեառնէ:

Տաճարի հարաւային դրան կամարակալ քարի վրայ.

Ես Սարգուք եւ Բահր շինեցաք երկու խորանս:

Ես Վահրամ, Ստեփաննոս, Սաչատուր, Մխիթար տուաք այգին ի ժամանակս Յովասափ առաջնորդի:

## ԲՋՆԻԻ Ս. ԱՍՏՈՒՆԺԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Տեղադրութիւն.— Բջնիի Ս. Աստուածածնի վանքը գտնուում է Բջնի գիւղում ( $62^{\circ}18'50''$ — $40^{\circ}27'45''$ ), Բարձրանում է Հրազդան գետի աջ ափին, լեռան լանջին, իւր արեւելահարաւային կողմում ունենալով Բջնիի հին ամրոցը: Արեւմտահիւսիսային կողմում բացւում է Հրազդանի սքանչելի հովիտը: Վանքը պարսպապատ է և չորս աշտարակներով ամրապնդուած: Կառքի մի շատ վատ ճանապարհ վանքը միացնում է Երևանից Նոր-Բայազէտ տանող ճանապարհի Սուխոյ-Ֆանտան փոստային կայարանին, ձգուելով մօտ 12 վերստ:

Պատմական տեսութիւն.— Բջնիի ս. Աստուածածնի եկեղեցին կառուցել է Գրիգոր Մագիստրոսը 1031 թուին: Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը Սմբատ Շահնշահի հրամանով դարձրել է այս վանքը եպիսկոպոսարան, որի թեմը սկզբում տարածուել է արևելքից Գեղամայ ծովից մինչև Ախուրեան գետը, և հիւսիսից Գուգարքի սահմաններից մինչև բնիկ Բջնիի վիճակի հարաւային ծայրը, բայց յետոյ այս կողմից աւելի է տարածուել դէպի Այրարատեան նահանգը:



Բջնի գիւղ.

1114 թուին Պանչաուունի Գրիգոր Գ. կաթողիկոսի ժամանակ Սեաւ լերան Բ. ժողովը որոշել է, որ Բջնիի վանքի արքեպիսկոպոսը մասնակցէ կաթողիկոսական ընտրութեան Թաղէոս առաքեալի, Տաթևի և Հաղբատի արքեպիսկոպոսներին հետ:

Երբ 1631 թուին, Փիլիպպոս եպիսկոպոսը Մովսէս կաթողիկոսից առաջնորդ է կարգուել այս վիճակին, վանքն սկսել է նորից բարգաւաճիլ. երեսնի չափ միաբաններ են հաւաքուել, եկեղեցու տանիքը նորոգել են Զուղայեցի Պոլյա Պետրոսի ծախքով: շինել մի ձիթհանք և մի ջրաղաց, իսկ սրա՝ Փիլիպպոսի յաջորդի՝ Մովսէս վարդապետի ժամանակ վանքը շրջապատուել է պարսպով և ամրացել բուրգերով (1666 թուին):

Այս ժամանակներում, այն է 1673 թուին Ֆրանսիացի ճանապարհորդ Նարտէնն այցելել է այս վանքը և նկարագրել իւր ճանապարհորդութեան մէջ:

Այս վանքին այցելութեան է եկել նաև Տուրնֆորը 1700 թուին, որ ի նկատի առնելով տեղի բազմաթիւ աւերակները, ենթադրել է, որ հնումը մի մեծ քաղաք է եղել:

Մինչև ԺԸ. դարի կէսը յիշում են վանքի առաջնորդներ, որովհետև հին եպիսկոպոսարանը վանքի էին փոխել: Սիմէօն կաթողիկոսը իւր Զամբու աշխատութեան մէջ յիշում է այս վանքը իբրև շէն իւր ժամանակ, և թւում է մօտ յիսուն գիւղ Կոտայք և Վարաժնունիք գաւառների մէջ, որոնք ենթարկուել են այս վանքին: Նաև յիշում է քսանից աւելի նուիրատուներ՝ որոնք 1688 թուից մինչև 1744 թիւը զանազան կայքեր են նուիրել այս վանքին: Այս ժամանակից յետոյ վանքը հետզհետէ անջքացել է, և կառավարուել մի մի վանահայրով:

Բջնու Ս. Աստուածածին վանքի եպիսկոպոսներն ու առաջնորդները, որոնք յիշուած են գրքերի կամ արձանագրութիւնների մէջ՝ հետեւեալներն են.

1030—50 (?) Նիիրեմ՝ եպիսկոպոս, որին Գրիգոր Մագիստրոսը գրեց մի գեղեցիկ թուղթ, բանասիրելով նուան մասին: 1051. Յովնաննէս, յիշատակուած Գեշառիսի արձանագրութեան մէջ:

1205—9. Վրթանէս, որ գտնուել է Լոռուայ և Անիի ժողովներում:

1246. Գրիգոր եպիսկոպոս:

1246—67. Վանական:

1299. Յովնաննէս:

1306. Սարգիս:

1358. Վանական, որի մասին թերևս ասում է Թովմա Մե-

ծոփեցին թէ սպանուեց յառնուլ Բըջնոյ ի թագաւորէն Ազախու թաթարացաւ:

1387. Վանակ կամ Վանական, որ սպանուել է Լանկթեմուրի արշաւանքի ժամանակ Բջնին առնուելիս:

1441. Յովնանէն եպիսկոպոս, որ գտնուել է Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ընտրութեան ժամանակ էջմիածնում:

1610—24. Մանուէլ արքեպիսկոպոս, երաժիշտ\*):

1631. Փիլիպպոս (յետոյ կաթողիկոս):

1643. Փիլիպպոս միւս:

1646—77. Մովսէս բաբունապետ, և արհի եպիսկոպոս, չոր փայլէ իբրեւ զարեգակն ի միջի տանս Արարատեան նահանգիս որին նահապետ կաթողիկոսը առաջնորդ կարգելով նուիրել է իւր հրամանով 1645 թուին արտագրուած մի ձեռագիր Յայմատուրք, որ այժմ պահուած է էջմիածնի մատենադարանում (№ 1493/17):

1688. Սիմոն:

1690—1701. Մնարովս:

1702—1716. Յովնանէս, Ռնդամալցի:

1716—1733. Դաւիթ, Աղէքսանդր Ա. կաթողիկոսից ձեռնադրուած:


1741. Կարապետ:

Վանքի նկարագիրը.—Ս. Աստուածածնի վանքը բաղկացած է միայն մի եկեղեցուց և մի փոքրիկ մատուռից: Թէ եկեղեցին և թէ մատուռը շինուած են սև, սրբատաշ քարով: Եկեղեցու երկարութիւնն է 22 մետր, լայնութիւնը 14 մետր և բարձրութիւնը մօտ 15 մետր:

Եկեղեցին ներքուստ անսխն է. չորս ահագին և շատ գեղեցիկ որմնասիւնների վրայ բոլորում են բարձր, պայտաձև կամարներ, կրելով իրենց վրայ մի գմբէթ: Արևմտեան պատին կից ևս բարձրանում են երկու փոքր որմնասիւններ՝ որոնք կամարներ տալով զէպի մէջտեղի որմնասիւնները կազմում են կամարակապ խորշեր, և սրանք փոխարինում են նախնական աւանդատներին: Չորս գլխաւոր որմնասիւնները բաղկացած են երեքական կիսաբոլոր և նոյնչափ քառանկիւնի կիսասիւնների միացումից, յանկած նախ քառանկիւնի և ապա կիսաբոլոր խարսխի վրայ և պսակուած նախ կիսաբոլոր և ապա քառանկիւնի խոյակով: Սրանցից երկու, միջին սիւնների խոյակները զարդարուած են գեղեցիկ վարդազարդերով:

Ուշագրաւ է, որ որմնասիւնների քարերն երկական մետր

\*) էջմիածնի № 238 ձեռագիր Աւետարանից:



Բջնիի ս. Աստուածածին

բարձրութեան են, և ամենամեծ կիսաբոլոր որմնասեան կիսա-  
շրջանը 1,5 մետր է։ Արեւելեան կողմում բացւում է բոլորածե,  
կամարակապ և թաղակապ կողակը մի պատուհանով։ Կողակի եր-  
կու կողմից բարձրանում են մի մի որմնասիւն, որի կողքին բաց-  
ւում է աւանդատան դուռը։ Սեղանը լայն է, բոլորածե և բարձր՝  
ունենալով երկու կողքից սանդուխտներ։ Սեղանի ճակատը շրջ-  
թայածե օրնամենտով եղրափակուած է, և կարմիր ու սև քարե-  
րով խաչեր ձևակերպած։ Աւանդատները թաղակապ են, մի մի  
փոքրիկ սեղանով և մի մի փոքրիկ պատուհանով։ Ըստ երևոյթին  
այս աւանդատների վերև լինելու են ուրիշ աւանդատներ կամ,  
աւելի ճիշտ՝ դադանի պահարաններ, մանաւանդ որ դռնից իւրա-  
քանչիւր աւանդատան վերև բացւում է մի փոքրիկ և նեղ պա-  
տուհան, որ եկեղեցու միջից նկատելի չէ։

Եկեղեցին արտաքուստ շատ պարզ է. արեւելեան պատի մէջ  
կան երկու ներսանկուածներ, ճաճանչով և կամարով պսակուած։  
Սրանց միջև բացւում է մի պատուհան, երկական կիսասնեքով և  
գեղեցիկ կամարով եղրափակուած։ Հարաւային պատի մէջ կայ  
մի դուռն մի պարզ շրջանակով, սրա վերև՝ մի պատուհան, նոյն-  
պէս պարզ շրջանակով և փոքր ինչ բարձր մի ռոզաս։ Արեւմտեան  
միապագապ պատի մէջ բացւում է մի հասարակ դուռ և մի պա-  
տուհան, իսկ հիւսիսայինի մէջ՝ միայն մի պատուհան։ Եկեղեցու  
դմբէթը զլանածե է, չորս փոքրիկ պատուհաններով և կոնածե  
կաթուղիկէով։ Խաչը այժմ վայր է ընկած։

Մատուռը գտնւում է եկեղեցու հարաւային պատին կից և  
սազաչէն է։ Սրա վրայ վերջին ժամանակներս մի փոքրիկ զմ-  
բէթ բարձրացնելով՝ քաշ են արել եկեղեցու զանգակները։ Մա-  
տուռի արեւմտեան ճակատին կանգնեցրած է մի նրբաքանդակ  
խաչքար։

Մատուռն ունի մի դուռն, մի ռոզաս և մի փոքրիկ պա-  
տուհան։

Եկեղեցու արեւելեան կողմը կան մի շարք գերեզմաններ գե-  
ղեցիկ խաչքարերով։

Ս. Սարգսի մատուռ.— Բջնի բերդի արեւելեան կողմը, մի  
առանձին քարաժայռի գաղաթին բարձրանում է մի փոքրիկ մա-  
տուռ՝ Ս. Սարգսի անունով։ Ժայռի ստորոտով հոսում է Հրազ-  
դան գետը՝ ոլորապտոյտ, մի սքանչելի տեսարան ընծայելով մա-  
տուռից դիտողին։ Մատուռը շինուած է սև, տաշած քարից, և  
արտաքուստ խաչածե է, 6½ մետր երկարութեան, 6 մետր լայ-  
նութեան և մօտ 5 մետր բարձրութեան։ Մատուռը ներքուստ  
անսիւն է, ռոմանական չորս կամարներով և մի ութանկիւնի

գմբէթով, որ վերջանում է կոնաձև կաթուղիկէով: Կողակը բոլորակաձև է և թաղակապ, մի սեղանով և առանց խորանների:

Մատուռն ունի միայն մի դուռն և երեք փոքրիկ պատուհան, մինն էլ գմբէթի վրայ:

Մատուռի շուրջը կան մի քանի հին խաչքար:

Բացի այս մատուռից՝ գիւղում կան նաև ուրիշ շատ մատուռներ՝ արդէն աւեր կամ կիսաւեր, որոնցից յիշատակութեան արժանի են Ս. Գէորգ և ս. Յովնանէս մատուռները: Վերջինիս մօտ կայ մի «Վալթնաղբիր», որի առաջ սակաւակաթ կանայք մատաղ են անում և ջրից քսում իրենց ծծերին, որ կաթն աւելանայ: Տաւարի ցաւ տարածուած ժամանակ տաւարը բերում շրջեցնում են այս աղբրի և մատրան շուրջը և այս ջրից սրսկում վերան:

### Արձանագրութիւններ:

Եկեղեցու դրան աջ կողմի վրայ \*):

Թ. ՆՁ. (=1031) Ծնորհիւն Աստուծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի և Սմբատա Շահանշահի որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս զսուրբ Աստուածածինս. հիմնարկեալ կատարեաց Կրիգոր իշխանաց իշխան որդի Վասակայ և տուաւ վիճակ ի սուրբ Աստուածածինս ի Փոշէհանից մինչև ի Նիգ և Դիւա(տ)ուն... և յԱղստե. տվաք զաւագան և սուրբ նշան և աթոռ: Արդ՝ եթէ ոք խափանել ջանա զաթոռս կամ յայլ տեղիս փոխել կամ զհողն յապշտակել, կամ զաւանդ եկեղեցոյս գողանալ, թէ յեպիսկոպոսաց կամ յիշխանաց կամ ով որ հակառակի նզովեսցի յԱստուծոյ և ի մէնջ և ի ՅՄԸ հայրապետաց. արմատաքի ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ և անյոյժ կապեսցի: Եւ արդ այս է ընական և առաջին սահմանահատ վիճակ և աթ(ոռ զոր) հաստատեցաք արձանագրով և շրջաբերականով զսահմանահատ վիճակի սորա. որ է. յարեւելից ի Ծար գետոյ մինչև ի գետն Ախուրեան, յԱււոյ և ի հիւսիսայինս յԱղստե... և որ հատանել ջանա յայսմանէ ի միջոյ կամ յեղբրաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զանէծս և զպատիժս կրեսցէ և ի հանդերձելուսն. ամէն:

\*) Այս արձանագրութեան մի մասը, որ մնացել է եկեղեցուն կից շինած մատրան պատի տակ, վերստին փորագրուած է մատրան արևմտեան պատի վրայ:

Հարաւային դրան կամարակալ քարի վրայ.

ԹՎ. ՈՄԸ (=1209) Յաշխարհակալութեան քաջաց և յաղթողաց մեծ շահնշահաց Ջաքարէի և Իւանէի որդւոց Սարգսի, յեպիսկոպոսութեան Վրթանիսի, ես մեղուցեալ ծառայ Աստուծոյ Վահանս... շինեցի զիշխանավանից մեծ և կեդեցին յանուն սուրբ Աստուածածնին. և զայս Աստուածածնիս նորոգեցի սալով, որ ի բնէ չէր սալած. և հաստատեցին ի տարին և աւր ժամ ի տաւնի սուրբ Մննդեանն վասն փրկութեան հոգւոյ իմոյ, ով խափանէ զպատարազն՝ իմ մեղաց պարտական է առաջի Քրիստոսի: Նոյն դռան վերև.

ԹՎԻՍ Հայոց Ձ (=1251) ազգմամբ և հրամանաւ Հոգւոյն սրբոյ և կամաւ Կոստանդեայ կաթողիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնքս և եղաք աստ ծառայքս Քրիստոսի Տէր Վանական եւ Տէր Գրիգոր ողորմութեամբ նորա եպիսկոպոսք Բջնոյ... յիշխանութիւն մեծին Շահնշահի. զի յայսմ հետէ մինչև ի կատարած չոռնի որ առնել կաշառաւք ձեռնադրութիւն... ու երէց, կատարիչք հրամանացս աւրհնին յԱյ:

Նոյն հարաւային պատի վրայ, ներքուստ.

ՉՄԲ (=1303) Կամաւն ամենակալին Այ ես Գրիգոր իշխան որդի... Թոռն Դուփին...

Եկեղեցու հարաւային պատի վրայ, ներքուստ.

Շնորհաւք նախախնամող սուրբ Հոգւոյն ես Քոչաքչեր եւ ամուսին իմ Սորիշահ միաբանեցաք սբ Աստուածածնիս եւ տուաք արդիւնք հալալ յընչից մերոց եւ սպասաւորք սորա տէր Յովհաննէս տէր Սարգիս կարգեցին ի տարին Դ. աւր պատարագել զՔրիստոս ի տաւնի ծննդեան Բ. Քոչաքչերիս աւնեն եւ Բ. Սորիշահին. ամէն. ՉՄԵ (=1306).

Հարաւային պատի վրայ, պատուհանի տակ.

ԹՎ. ՊԷ (=1358) Ի զարմէ երկուց հայրադատաց քաջաց և յաղթողաց Ամիր սպասալար Ջաքարիայի և Աթապակի Իվանէի, ես Աթապակ Շահնշահ որդի Աթապակ Ջաղայի ի ժամանակս բռնակալութե Մէլիք Աշրափին, զմեր հայրե

նիքս ղԲՅնի քաղաք յիսնէ հուքմով խել էր, զիր ճորտերին եսիր կացուցեր. Հաճի բէկ նեղեցաւ ու զքաղաքս ի

հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ի չորս զիաց անընակ արար ու զ քր

խտոնէք անխնայ կոտորեաց. Մեր յԱծ ապաւինելով զմեր Սալահրի... հեծելին գլուխ կացուցաք որ ի վերա

նստաւ բազում աշխատութք. զիր ապրանքն նախ նայ բաշխէր. որ Ած խղճաց մեզ ու մեր հայրենիքս ղԲՅնու բերդս ի մեր ձեռս բերեաց. վասն

փրկութե հոգոյ և յերկար կենդանութե մերոյ կրկին նորոգեցաք զեկեղեցիս եւ զԲունիաթ արձանս վերստին հաստատեցաք, զվիճակ, զվանք, զգեօղ, զսարի, զգաշտի հայրենիք... ու շինական ու գործաւոր զինչ են... Ածածնա ծառաութե ազատ և Թարխան արարին

ի հարկէ և ի ծառայութենէ. Տէր Վանական և սպասաւորքս խոստացան մեզ Յակոբայ տաւնին գիշերապաշտաւն առնեն. Ով ոք զմեր հաստատած արձանս խափանել ջանա դատի յԱյ եւ մեր մեղացն պարտական եղիցի:

Եկեղեցու հարաւային պատի բարձրում:

Յուսոֆն անմահին Այ եւ Զաքարէ որդի Սահիպ-գիւ վանին եւ պարոն Խոշաքին, Թոռն Աթաբակ Ավագին որդոյ Աթաբակ Իվանէի վասն մեր յերկար կենդանութեան եւ փրկութեան հոգոյ իմոյ ի վեր կալայ որ ի ԲՅնի այլ մարդոյ տէրութիւն չէլնի, եւ Թողի զամէն հարկ զամիրայհարկն, զհարսանէհարկն զկովայ համարն, զկալաթաղարն զսայլահարկն, զմահկանէն, աւտարականն քան զդադմէն այլ իրք չտա. յաղման չառնեն որ յայտ հետե մինչև յաւիտեան հաստատուն կայցէ արձանս իմ. եթէ ոք խափանել ջանայ յիմոց կամ յիմ գաւակաց կամ յաւտարաց իմ մեղացն պարտական է առաջի Այ:

Մի մեծ խաչքարի պատուանդանի վրայ.

Ի Թուխ ՈկԸ. (=1219) մեք Աւշիրա..... յեշեսջիք ի Բրիստոս: